



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ ՈՐՈՇՈՒՄ

ք.Աշտարակ

2024թ. նոյեմբերի 20 -ին, N 509 -Ա

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԹԱԼԻՆԻ ՄԵԼԱՆԹՈՆ ԱՐՍԼԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԻՐԱՆՈՒՇ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ հավելվածի 60-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածի 1-ին մասով, 160-րդ հոդվածով, 162-րդ հոդվածի 1-ին մասով, 164-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Ս. Գրիգորյանի 2024 թվականի նոյեմբերի 18-ի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Թալինի Մելանթոն Արսլանյանի անվան թիվ 1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող Սիրանուշ Գրիգորյանին տրամադրել ամենամյա արձակուրդ 2023-2024 թվականների ուսումնական տարվա համար 25 աշխատանքային օր տևողությամբ 2024 թվականի նոյեմբերի 25-ից դեկտեմբերի 27-ը ներառյալ:
2. Սիրանուշ Գրիգորյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Թալինի Մելանթոն Արսլանյանի անվան թիվ 1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունների կատարումը ժամանակավորապես դնել «Թալինի Մելանթոն Արսլանյանի անվան թիվ 1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները կատարող Հարություն Հովհաննիսյանի վրա:

 Восстановимая подпись

X 

VERIFIED OCSP 21.11.2024 14:23:36 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309890457



Վ. ԱՆՏՈՆՅԱՆ